ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2016թ. հունիսի 3 N 63-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի առաջարկությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) <<Աշտարակ քաղաքի Ն. Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում << Սուսաննա Պետրոսյան>>, <<Հակոբ Ստեփանյան>> և <<Արա Ղալաչյան>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Հասմիկ Նազարյան>>, <<Աշոտ Դավայան>> և <<Մարիամ Եդիգարյան>> բառերով:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ